

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊԵԱՆ

ԿՈՄԻՏԱՍԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ ԵՎ ԱՆՈՐ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ



անճարեղ Կոմիտասի գործունեությունն ու մշակութային հարուստ ժառանգությունը կգնահատվին ամենեն առաջ օրգանական այն սերտ կապին համար, որ անոնք ունին ժամանակակից հայ կյանքին հետ, հայ ժողովուրդի ստեղծագործական լավագույն ավանդություններուն հետ: Կոմիտասի կյանքն ու գործունեությունը միահյուսված են հայ ժողովուրդի կյանքի հետ և ներթափանցված են անոր ապրումներով, խոհերով ու ձգտումներով: Կոմիտաս իր բազմաբեղուն գործունեությունը ծավալեց այն ժամանակ, երբ սուլթանական բռնակալությունը հայերը բռնի կերպով թրջացնելու քաղաքականությունն արդեն անցեր էր կազմակերպված զանգվածային ջարդերով զանոնք իսպառ բնաջնջելու հրեշտային ծրագրի իրագործումին: Այդ այն ժամանակն էր, երբ սուլթանական բռնակալությունը կփորձեր արյան ու սարսափի մեջ խեղդել արևմտահայ վառ հավատքը՝ ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ, ազատագրված Մայր Հայրենիքի մեջ, արևելահայ եղբայրներու հետ միասնական ընտանիք մը կազմելու մասին: Ճիշտ ատոր մեջ ալ պետք է փնտրել գաղտնիքը ամենաջերմ ա՛յն սիրույն և գուրգուրանքին, որով ժողովրդական խավերը շրջապատեցին Կոմիտասը ամեն տեղ: Ճիշտ ատոր մեջ ալ պետք է փնտրել գաղտնիքը գաղափարական ա՛յն ուժին, որով Կոմիտասի երգը կազդեր հայ ժողովրդական բազմություններու վրա: Կոմիտասի երգի մեջ ո՛չ միայն բյուրեղացած կերպով դրսևորվեցավ հայ ժողովուրդի հոգիի հարազատությունը, այլև անոր մեջ առան-

ձին ուժգնությամբ և խորությամբ արձագանքեց իր ազատագրական ձգտումներու վերելքի վրա հանկարծ պատուհասված, բայց ապրելու և ստեղծագործելու անընկճելի կորովով օժտված հայ ժողովուրդի հոգիին մեծություներ, անոր ազատասիրությունը, անոր հայրենասիրությունը:

Հավատք և սեր՝ հայ ժողովուրդի ներքին ուժին և գեղեցկության նկատմամբ, ձգտում՝ ազատ և երջանիկ կյանքի համար, կարոտ և բաղձանք՝ ազատ և միասնական Հայրենիքի նկատմամբ, ահա՛ հանգամանքներ, որոնք կալամանավորեն թե՛ Կոմիտասի գործունեությունը և թե՛ անոր մշակութային ժառանգության անթափանչ հմայքը:

Հայ ժողովուրդի ներքին ուժի ու գեղեցկության նկատմամբ Կոմիտասի անսահման հավատքն ու սերը միանգամայն պարզորոշ արտահայտություն են գտեր անոր հետևյալ բնորոշ խոսքին մեջ. «Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը, զնացեք և սովորեցեք նրանից»: Իր այս հիմնական սկզբունքն ելնելով, Կոմիտաս իր հանճարի ամբողջ ուժն ու եռանդը նվիրեց հայ ժողովուրդի երաժշտական թաքնված գանձերու դրսևորման և բյուրեղացման բարդ ու երախտալից գործին:

Կոմիտասի երաժշտական հանճարի բազմակողմանի թափանցումներու ու մշակումներու շնորհիվ, հայ գեղեցկական երգի առանձնահատուկ գեղեցկությունը և ուժը հասան այնպիսի վսեմության, որ Կոմիտասյան երգը կանգնեցավ հայ ճարտարապետության ու դուցցազներգության գեղարվեստական բարձրության վրա:

Օժտված ամբողջական երաժիշտի բազմակողմանի հանճարով, Կոմիտաս հանդես ե-

կավ թև՝ իրրե հայ երգի անմահ գանձերու հայտնաբերող և թև անոր մեծավաստակ հավաքողը, և, ինչպես այդ երգերու խորամթափանց և նրբարվեստ մշակը, ան հայ երգը հասցուց իր պարզ վսեմության, դասական բարձրության: Որպես հայ երգի յուրահատուկ կառուցվածքի ամբողջ գաղտնիքը բացահայտող մեծատաղանդ գիտնական-տեսաբան, ան հայ երգին տվավ առանձնահատուկ ձևի և բովանդակության վերլուծության նվիրված շարք մը ուղեցույց վերին աստիճանի արժեքավոր հոդվածներ: Որպես հայ երգի նրբաճաշակ ու մեծահանձար կոմպոզիտոր, թափանցած ըլլալով հայ երգի ներքին ամբողջ գաղտնիքին, ան իր հավաքած ու մշակած երգերեն շատերը վերածեց բազմաձայնության այնպիսի հմայիչ կատարելության, որ զանոնք լսելով, մարդ ինքնաբերաբար կզգա հայ գեղջուկի բարաստուն և ջերմ սիրտը իր վշտի, ցնծության, կարոտի և հույսի, տանջանքի ու պայքարի միահյուսված ապրումներով: Կոմիտասի հանդես եկավ նաև որպես հայ երգի խոշորագույն խմբավար, որ իր ճպտի կախարդիչ շարժումներով այնքան միաձուլվ պարզությամբ դրսևորեց իր բազմաձայն եղանակներու ամենանուրբ, ամենաաշխատանք արժեքավորումները: Ինչպես հայտնի է, իր համերգներն ունկնդրող անվանի երաժշտագետներ անգամ համախա չկարողացան հավատալ իրենց աչքերուն ու ականջներուն և համերգեն վերջ բեմի ետևը փրկաբեցին խումբին ընկերակցող շնաշխարհիկ գործիք մը...: Եվ, վերջապես, որպես հայ երգի ամենավարպետ կատարողը, երբ Կոմիտաս հայ ժողովուրդի մեծատաղանդ բանաստեղծի՝ Ավետիք Իսահակյանի համար երգեց իր նոր գրած և մշակած «Մոկուց Միրզան», ան, պահ մը թողնելով իր Արտուկ-Ալայի թափառումները, տեղափոխվեցավ դուցազնական աշխարհի մը մեջ, կախարդական բնության մը մեջ, ուր ամեն բան վեհ էր, վիթխարի, հերոսական, և զգաց, որ «Այդ երգը շատ հին է, հեթանոսական դարերից, խոսքերն ու եղանակը միաձուլվ, բարձր լեռներից, շառաշուն ջրերից, խոժոռ ժայռերից են ծագում առել, մեր նահապետների Օգոց է բխել, այնքան հին է, որ Ձենով Օհանյան երգել է, Սասունցի Դավիթը լսել...»: Եվ, վերջապես, մեծ եղեռնի օրերուն, Ջանդերիի մեջ ձերբակալված բախտակիցներուն առջև երբ «Տէ՛ր, ողորմեա՛» երգեց, ան հաջողեցավ այնքան հուզում խտացնել իր ձայնին մեջ, որ վերապրողները մինչև այսօր չեն կրնար առանց արցունքի հիշել այդ պահը: Եվ, վերջապես, բացի Մարգարիտ Բաբայաններու կենդանի վկայություններեն, Կոմիտասի կատարողական արվեստի բարձրության մասին կվկայեն

նաև այն քանի մը երգապնակները, որոնք անկե հասեր են մեզ: Ի միջի այլոց, հայկական արվեստի այս բոլոր բնագավառներուն մեջ Կոմիտասի հանդես կուզա հայ երգի բազմակողմանի իր հանճարով: Մոտենալով հայ գեղջևական երգի հարուստ գանձերուն և զանոնք հասցնելով արժանավայել բարձրության, Կոմիտաս ստեղծեց երաժշտական հիանալի աշխարհ մը, որ հազարավոր թելելով կապվեցավ հայ ժողովուրդի, հայ աշխատավոր գյուղացիի բազմադարյան կյանքին, անոր դարավոր երաժշտական մշակույթին հետ: Երաժշտական մշակույթի այդ անթառամ գեղեցկությունը ստեղծագործելով, Կոմիտաս որպես երկաթ ունեցեց ինչ է այն անսահման սերն ու խորունկ հավատքը, որ ան կտածեր հայ ժողովուրդի գեղարվեստական հարուստ ստեղծագործական ավանդություններուն նկատմամբ: Կոմիտասի հայ երգի մեջ Կոմիտասի հանճարն ու հայ ժողովուրդի ստեղծագործական ընդունակություններն այնքան միաձուլված են, որ դժվար է ըսել, թե ո՞րտեղ կվերջանա հայ ժողովրդական երգը և ո՞րտեղ կսկսի Կոմիտասի հանճարը: Ծիշտ է, որ այդ հանճարը ո՛չ օպերաներ, ո՛չ արիաներ, ո՛չ ալ ողմանսներ գրեց, սակայն հայտնագործելով մեր ազգային երգն ու երաժշտությունը, բացահայտելով անոնց առանձնահատուկ վսեմությունը, բարձրացուց զանոնք արվեստի անհաս բարձունքները. ան նույնիսկ ավելին ըրավ՝ իր հանճարի մեծության շնորհիվ կրցավ միջազգային երաժշտության պանթեոնին մեջ հայ ժողովրդական երգի համար ապահովել ուրույն ու պատվավոր տեղ մը: Երաժշտության այդ միջազգային պանթեոնին մեջ, հայ երգն ու Կոմիտասի հանճարը երևան կուզան անխզելի միասնություն մը:

Կոմիտասի հանճարը կփայլի հայ երգով, հայ երգն ալ Կոմիտասի հանճարով: Այս պատճառով հայ երաժշտության մեջ ամենեն առաջ Կոմիտաս ինքը հանդիսացավ կենդանի ապացույցը իր հիմնական այն սկզբունքի ճշմարտության, որ մեծագույն ստեղծագործողը ժողովուրդն է:

Հայ ժողովուրդի զավակ, հավատք ու սեր տածելով հայ ժողովուրդի ստեղծագործական ընդունակություններուն նկատմամբ և վերջապես ստիպելով հայ ժողովուրդին, Կոմիտաս հայ երգը բարձրացուց գեղարվեստական այնպիսի կատարելության, որ ան իր այդ բարձունքն ընդմիջտ կհնչե, իր ոլորտներուն մեջ առհավետ պահելով հայ ժողովուրդի գեղարվեստական առիթնող տաղանդը և այդ տաղանդի մեծագույն ներկայացուցիչ Սողոմոն Սողոմոնյանի՝ Կոմիտասի պաշտոն անունը:



Կոմիտասի երաժշտական ստեղծագործության անմահ ժառանգության մեջ գեղարվեստական վառ արտահայտություն է գտեր ինչպես հայ ժողովուրդի, այնպես ալ անոր արժանավոր մեծ զավկի՝ Կոմիտասի բուն ձեռքով արված ազատ ու երջանիկ կյանքի համար:

Շրջելով Մայր Հայրենիքի ամենախուլ անկյուններն անգամ, ականջ տալով հայ ժողովուրդի բաբախուն ու խռովահույզ մեծ սիրտին, Կոմիտաս հավաքեց հայրենի արտերու, կայերու, հարսնիքներու և հյուղականներու մեջեն և հանձարեղ մշակման ու վերլուծման ենթարկեց աշխատանքի, խրախճանքի, պարի, հայրենարարողության, օրորի, սիրո գեղջուկ երգերը: Երգերու այդ պայլազանության մեջ Կոմիտաս գտավ այն ընդհանուր, ինչպես՝ գաղափարական բովանդակություն, որ վիճաբանություն և կմիացնե ղանոնք հիմնական առանցքի մը շուրջ: Այդ երգերուն մեջ հայ ժողովուրդը տարբեր եղանակներով արտահայտեր է իր ձգտումը ազատ ու երջանիկ կյանքի համար: Ամեն երգի մեջ թախիծ կա, խոր թախիծ մը, որ թեև արվեստի պես միշտ կշարժի եղանակի հետ, և հաճախ ընդունելով սրտաճմիրկ համեմատություններ, միշտ ալ կվերջանա ջերմ հույսի մը մեջ:

Հայ գեղջուկ երգի այդ թախիծին մեջ արտահայտություն է գտեր ընկերային ճնշումներն, կապանքներն, անարդարություններն, կողոպտությունն ու կոտորածներն տառապող հայ ժողովուրդի մեծ և տարավոր վիշտը, իսկ հայ գեղջուկ երգի ներքին ուժակաությունը, անոր կշռության ճկուն ճոխությունը պայմանավորող այդ հույսի մեջ զրևերով է անոր ձգտումն ու պայքարը ազատ ու երջանիկ կյանքի համար, անոր ատելությունն ու արհամարհանքը ընկերային շարիքի նկատմամբ, ընկերային-քաղաքական կապանքներու նկատմամբ: Երգելով իր աշխատանքի պահուն ու սրտագին խոսակցության բովանդակով «ախբեր ջան» եղներու ու «հով չընող» սարերու հետ, երգելով իր մանկան օրրանի առջև ու ինքնիրեն պատմելով կյանքի դառնության ու օրվան հոգերուն մասին, երգելով խրախճանքի պահուն ու վայրկյան մը խոհուլ փորձելով իրեն ճնշող ցավերն ու հոգերը, հայ գեղջուկն իր երգի մեջ տվեր է այն սև օրը, որուն մեջ հեացեր ու տառապեր է ան, և մյուս կողմեն՝ տվեր է այն պայծառ օրը, որուն ձգտումն և հավատացեր է ան:

Հավաքելով հայ գեղջուկի սիրտեն անոր վիշտն ու հույսը, ասոնք մատնանշելով որպես հայ գեղջկական երգերու բնորոշ գիծերը, իր հանձարը ի սպաս դնելով

ատոնց յուրահատուկ ուժին և գեղեցկության, ասոնց գաղափարական բովանդակության զրևերում, Կոմիտաս միաժամանակ երգեց իր սեփական վիշտը, իր սեփական կյանքի մեծ ողբերգությունը. «Գարուն ա, ձյուն ա արել...», Կոմիտաս թողնած մնաց...»: Իսկ մեծ դավաբաններու, զոհողություններու ու հալածանքներու դիմով հավաքելով, մշակելով և տարածելով հայ գեղջուկ երգը, Կոմիտաս փաստորեն կարտահայտեր նաև իր սեփական հավատքն ու ձգտումը հայ ժողովուրդի ազատ ու երջանիկ կյանքի համար: Այդ տեսակետեն Կոմիտասի ամբողջ ստեղծագործությունը արդյունքն է անոր այդ մեծ հավատքին և ձգտումին: Հայ գեղջուկը իր այդ հավատքն ու ձգտումը արտահայտեց իր երգերով, իսկ Կոմիտաս՝ նույն այդ երգերու մշակումին ու տարածումին համար զոհաբերելով իր ամբողջ գիտակցական կյանքը: Կոմիտասի մշակութային հարուստ ժառանգությունը կազմող հայ գեղջուկ երգերը մեկ կողմեն հեռավոր անցյալին մեջ կոտորացող սիրտի մը պես դեռ կամաց-կամաց վհեծեծեն և արտմագին կպատմեն մեծագույն կայսրություններու բարբարոսական հարձակումներն ենթարկված և անհավասար պայքարներու մեջ անօգնական մնացած ժամանակներու մասին, այն դարավոր լուծերու մասին, որոնց ենթարկվել է հայ տաղանդավոր ու ստեղծագործող ժողովուրդը բազմաթիվ անգամներ, այն հավերժ հալածանքներու և կոտորածներու մասին, որոնց ենթարկվեցավ անիկա բոլոր բռնավորներն ամենն ավելի բարբարոսը հանդիսացող սովորական կարգերեն. մեկ կողմեն հեծեծադին պատմելով այս բոլորի մասին, միաժամանակ այդ բոլորի խորքի վրա առանձնահատուկ խռովքով կպատմեն մեկի Կոմիտասի սեփական ողբերգության մասին. «Սիրտըս նրման է էն փրկած տրեքը,— կոտրեք գերբներ, խախտեք է սրներ, բուն պիտի դրնեն մեջ վայրի հավքեր...», «Սարերը հով չեն անում, իմ դարդին դարման անում...», «Միրանի ծառ, բար մի՛ տա, ճըղներդ իրար մի՛ տա, ամեն մեջդ ման գալիս՝ ցավերս իրար մի՛ տա...»: Միևնույն ժամանակ, հայ գեղջուկ երգերը կհանդիսանան հավատքի և հույսի այն վարարուն կանչերը, որ այդ մոռալի մեջեն արձակեր են հայ գեղջուկն ու անոր կյանքին սրտակից հանձարեղ Կոմիտաս, հայ ժողովուրդի անցյալի մոռալ օրերեն:

Կոմիտասի ապրած ողբերգությունն դեպի վաղվան պայծառ առավոտը, իր հավատքի և հույսի սրտագին կանչն է, որ կհնչե անոր երգերուն մեջ: Կոմիտասի երգերով ապրեցավ ու մեզ հասավ այն, ինչ որ

չկարողացան սպանել ո՛չ բարբարոսական հորդանքները և ո՛չ ալ համիդյան հրեշային բաղաբականությունը: Հայ ժողովուրդի արյան ու վիշտի ծովի մեջ արմատ նետելով, անոր ապրելու և ստեղծագործելու անսպառ կորովին սնելով, ուժ առնելով վաղվան նկատմամբ անոր ունեցած հավատքն ու հույսն և քաղցրախառնվելով Կոմիտասի հանձարով, հայ գեղջուկ երգը մեր Սովետական Հայրենիքի հավերժական գարունքին մեջ վերափոխվել է և անթառամ ու մըշտարույր ծաղիկներու պես բուրմունք կուտա զգլխի՜ն քաղցրությամբ մը:

Հայրենի մշակույթի բազմահարուստ այս բուրաստանին մեջ, Կոմիտասի երգերը կծաղկին իրենց յուրահատուկ բազմերանգություն և բուրմունքի մեջ, միշտ վառ պահելով Կոմիտասի անունը և անոր հանձարի մեծությունը:



Կոմիտասյան երգերու մեջ առկա եղսդ այդ հույսի, վշտի զգացումները խառնված են ազատ ու միասնական Հայրենիքի նկատմամբ կարոտի և բաղձանքի հետ. «Կոռ՛ւնկ, ուստի՛ կուգաս, ծառա եմ ծայնիդ, կոռ՛ւնկ, մեր աշխարհն խաբրիկ մը չունի՛ս...»: Բազմաշարժար ու կեղեքված հայ գեղջուկը վստահ է, որ ազատ ու երջանիկ կյանքը պայմանավորված է Հայրենիքի ազատագրումով: Ան լավ կյանքի մասին ունեցած իր բոլոր երազները կեղրոնացուցել է ազատ Հայրենիքի ձգտումի մեջ, և իր բոլոր ցավերուն տակ, կոտորացող վերքի մը պես կզգա իր ազատ Հայրենիքի պակասը: Պատահական չէ, որ հայ գեղջուկի սիրտը այնքան փոթորկահար կտառապի և կհորդի, երբ ան կանդաղառնա իր «անտուն»ությունը. «Մի՛ տսիր դարիբ՝ թե չէ սիրտս կարունի...», «Սև ծով մեծ տեսն՝ սիպտակն էր բոլոր, ալին կզարներ, չէր խառնի իրար...»: Պատահական չէ, որ հայ գեղջուկի փոթորկահար սիրտին մեջ հուզումը կալիքավորվի և անոր սև աշերտուն ծովին մեջ ջուրերը կխառնվին իրար, երբ ան կհուլմի հայրենի երկրի հրաբուր կարոտեն... «Կոռ՛ւնկ, ուստի՛ կուգաս, ծառա եմ ծայնիդ, կոռ՛ւնկ, մեր աշխարհն խաբրիկ մը չունի՛ս...»: Հայրենաբաղձությունը սակայն միայն խորունկ թախիծ ու վիշտ չէ հայ գեղջուկի մոտ: Անոր թախիծն ու վիշտը առանձնապես խոր կդառնան հայրենազրկության դիտակցության ատեն, բայց այդ հոգեսիտ ու հուսահատական չէ անոր մոտ: Հայրենաբաղձություն թախիծն ու վիշտն կսկսի անոր ձգտումն ու երազը Հայրենիքը ազատագրված տեսնելու մասին: Լավատես ու պայքարող հայրենաբաղձություն մըն է այդ, այլ ձևով բացա-

տրելով, հայ գեղջուկի յուրահատուկ հայրենասիրությունն է, իր յուրահատուկ արտահայտությամբ: Կոմիտաս խորապես ներառվելով ու բացահայտելով հայ գեղջուկ երգի հայրենասիրական բովանդակությունը, իր ստեղծագործությունը օժտեց այնպիսի յուրահատուկ ուժով մը, որ ունկնդիրները Հայրենիքի բույրը կառնեին, Հայրենիքի մթնոլորտը կպատկերացնեին, ու նույնիսկ հայրենի բնութենն կկախարդվեին այն ժամանակ, երբ Կոմիտասյան պարզ սիրային երգ մըն էր երգվածը, ալ չհաղված այն երգերը, որոնք ուղղակի կբեմադրեն կարծես հայ գեղջուկի աշխատանքը՝ հայրենի երկրին մեջ, անոր հուզումը Հայրենիքի նկատմամբ:

Կոմիտասի ամբողջ ստեղծագործությունը բաբախում մեկ ապացույցն է անոր ջերմ հայրենասիրության: Ան իր երգերով ո՛չ միայն տառապակոծ հայությունը կզինե ազգային հպարտության վեհ զգացումով, ան ո՛չ միայն Հայրենիքի ու հայրենասիրության զաղափարը կհրահրե իր երգերով, այլ միաժամանակ պայքարի կկոչե հանուն հայ ժողովուրդի ու անոր Հայրենիքի ռեուլուցիոն ազատագրության:

Հայրենիքի շքնաղ բնությունը, հայ գեղջուկի ներքին ապրումներն ու ձգտումները, և վերջապես՝ Կոմիտասի ներգործ հայրենասիրությունը խառնվելով Կոմիտասի հանձարին՝ առաջ են բերել ծայնեղն հրաշակերտներ, որոնց զաղափարական զարկերակը կհանդիսանա հայրենասիրությունը: Կոմիտաս դարձավ ամենաբաբախուն ներկայացուցիչը հայրենասիրության այն մեծ գաղափարին, որուն արծարծումին ու աշխուժացման համար գոհարեց այն իր սրտառուլ կյանքն ու մեծ հանձարը:



Հոկտեմբերյան Մեծ Ռեուլուցիան արդեն շատոնց վերջ է տվել հայ շինականի դարավոր տանջանքներուն, ազատ Հայրենիք ունենալու անոր հավատքն ու ձգտումը դարձել են իրականություն և ազատ ու երջանիկ կյանքի զարգացման համար ստեղծել է բոլոր հնարավորությունները՝ հայ ժողովուրդի ստեղծագործական տաղանդի դրսևորման համար:

Անցյալի դառն հուշ են դարձել հալածանքն ու կոտորածը, պատմության դիտին է անցել ինչպես մեծ վերք՝ հայ ժողովուրդի վերջին ողբերգությունը՝ 1915 թվականի մեծ եղեռնը:

17 տարի է, որ արդեն դառեր է բաբախումը Կոմիտասի սիրտին... Հանձարեղ Կոմիտասի սիրտը, ինչպես գոհար այդ եղեռնին, իր վերջին 20 տարիներուն ապրեցավ եղեռնական ու երկարաձիղ հոգևարբով մը: Սու-

թանական արյունոտ վարչակարգը բնաջնջեց ամբողջ սերունդ մը. ան հաջողեցավ արյան մեջ խեղդել արևմտահայ հատվածի տաղանդավոր ներկայացուցիչները և անոնց մեջ հանճարեղ Կոմիտասը, բայց չկարողացավ խեղդել այդ սերունդի ձայնը, անոր սրտագին երգը, անոր հավատավոր ձգտումը։ Դարերով տառապած հայ ժողովուրդի հայրենասիրական ու մարդկայնական լավագույն ավանդությունները խտանալով և բլուրեղանալով Կոմիտասի երգերուն մեջ, անցան արյան ու տառապանքի ծովերեն և հասան ազատ ու երջանիկ կյանքի, Սովետական ազատ ու բարգավաճ մեր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի մեջ։

Պատահական չէ, որ Կոմիտասի անունը և անոր հանճարեղ ստեղծագործությունը սովետական պատմաններու մեջ աննախընթաց թափով կծաղկին։ Պատահական չէ, որ Կոմիտաս այսօր իր երգերով կցուցագրվի սովետական երաժշտության ամենաառաջավոր շարքերուն մեջ և կմասնակցի մեր Սովետական Հայրենիքի վիթխատի վերելքին։ Հայ ժողովուրդի ստեղծագործական տաղանդի մեծագույն ապացույցներեն ու նվաճումներեն մեկն է Կոմիտասի ստեղծագործությունը։ Դիմաց այդ հանգամանքի շնորհիվ ալ՝ Կոմիտասի անունը երթալով ավելի հարազատ և սիրելի դարձավ։

Սովետական պայմաններու մեջ կաճի և կբարգավաճի հայ ժողովուրդի ստեղծագործական տաղանդը։

Բացի իր պատմական նշանակալից դերեն,

Կոմիտասի ստեղծագործությունը կծառայի այսօր որպես հոգևոր էանյութ՝ ձևով ազդային, բովանդակությամբ սոցիալիստական մեր սովետահայ երաժշտության համար, որ Արամ խաչատրյաններու, Ալեքսանդր Հարությունյաններու, Աշոտ Սաթյաններու, Թաթուլ Ալթունյաններու տաղանդներու շնորհիվ գուրս կուգա Կոմիտասի ստեղծագործությունը բնորոշող ձայնային երաժշտության սահմաններեն և կնվաճե նաև երաժշտության մյուս բնագավառները։ Կոմիտասի երգը կհնչե և ընդմիշտ պիտի հնչե մեր Հայրենիքին մեջ, ինչպես հայ ժողովուրդի ստեղծագործական տաղանդի նվիրական հաղթերգ մը, ինչպես հարազատ սիրտի ջերմագին դորով, ազատ ու երջանիկ մեր Հայրենիքի նկատմամբ, ինչպես սրտապնդիչ ու խրախուսող ուժ։ Կոմիտաս իր երգը ստեղծագործեց այն պատմական ժամանակաշրջանին, երբ հայ ժողովուրդը բուռն կերպով կձգտեր ազատ ու երջանիկ կյանքի, ազատ ու միասնական Հայրենիքի, իսկ հիմա ու ասկի վերջ՝ Կոմիտաս կապրի ու կստեղծագործե ավելի մեծ չափանիշով՝ քանի որ ան կսպրի իր այդ ձգտումի իրականացման պայմաններուն մեջ, Սովետական ազատ ու բարգավաճ Մար Հայրենիքին մեջ, մեծատաղանդ սովետահայ ժողովուրդի բաբախուն ու ջերմ սիրտին մեջ։ Կոմիտասի անմահ երաժշտության ժառանգությունը թանկարժեք մեկ մասը կկազմե անմահության այն ավանդին, որ հայ ժողովուրդը իբրև իր կյանքին ու հոգիին մեկ մասնիկը իր հետ կտանի դեպի լուսաշող ապագան։

